Ողբալ յաւէրժ բարւոյ Հօրդ զէր յորկայից մահացու,
Ըզհովուապետդ ողբալ Հայոց վաթսուն և մի վարեալ ամս.
Ի դամբարանս հիւլէք մարմնոյդ ննջեցին նսեմաստուեր,
Որպէս երբեմն ի Սաղիմ Ցեառըն Պօղոյ հանդեաւ նշխար,
Նա հօրեղբայր Ձեր արթուն և միաբան Ցանն Յակոբեայ
Զհովուական վարեաց պաշտօն Պօլսոյ ի դահ հայկազանց Դետ.
Որդւոցդ անկեղծ թացին արդեօք զտապան վեհիդ դառն արտասուք.
Այլ թացցէ և յապագայս առաքինեաց խնդից լալօն.
Մինչ որ յամպս հաստեաց զաթոռ,
Դարձցի յայս յարկ հողազանգուած՝
Ընդ սրբոց և ըզՁեզ ի խօսաացեալն ածել դրախտ։
1865 Յուլիս 28

Սարգիս Պատրիարքով հինգ պատրիարք թաղուած կ'ըլլայ Իւսկիւտարի Գերեզմանատունը. Ա.ը Զաքարիա Վանեցին, Բ.ը Յովհաննէս Կ. Պոլսեցի, Գ.ը Աստուածատուր, Դ.ն Կարապետ Կ. Պոլսեցի, Ե.ը Սարգիս Անդրիանուպոլսեցի, որ Պողոս Անդրիանուպոլսեցիի եղբօրորդին էր։

ԻԲ.

ՄԱՏԹԷՈՍ ՊԱՏՐԻԱՐՔ Կ. ՊՕԼՍԵՑԻ

Յետոյ կաթուղիկոս, թաղուած է Էջմիածնի Վանքը՝ սա պարզ տապանագրով.

Կաթողիկոս ամենայն Հայոց
Մատթէոս Ա. Կ. Պոլսեցի
Վախճանեցաւ եօթանասուն և մի
Ամաց ի 21 Օգոստոսի 1865 ամի

ԻԳ.

ԻԳՆԱՏԻՈՍ ՊԱՏՐԻԱՐՔ ՔԱՔՄԱՃԵԱՆ

12 օր միայն Պատրիարքութիւն ըրած՝ ննջած է, և թաղուած Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ աջակողմեան բակը. ունի խիստ շքեղ մահարձան մը, որուն վրայ արձանագրուած է հետևեալ 11 տող վերտառութիւնը.

Այստ հանգչի
Տէր Իգնատիոս Քաքմաճեան Արքեպիսկոպոս
ընտրեալ ի Պատրիարքութիւն Կոստանդնուպոլսոյ
ի 31 Յուլիսի 1869 ամի Փրկչին
եւ կնքեալ զկեանս յետ երկոտասան աւուրց